ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (1)

_____ «____» _____ թ.
վայրը

_____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Մատակարար», ի դեմս՝ _____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը
հիման վրա, մի կողմից, և _____,
կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները
այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս՝_____, որը գործում է _____
ազգանունը, անունը, պաշտոնը
հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է իրացման համար Գնորդին մատակարարել ապրանքներ, այսուհետ՝ «Ապրանք», իսկ «Գնորդը» պարտավորվում է իրացնել ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1. Մատակարարի կողմից ապրանքների մատակարարումը կատարվում է Գնորդի հասցեով:
2.2. Մատակարարման օր է համարվում «Գնորդ»-ին ապրանքի հանձնման օրը:
2.3. Ապրանքների յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար Մատակարարը պարտավոր է ձևակերպել և Գնորդին հանձնել ապրանքագիր՝ նշելով «Ապրանքի» անվանումը, քանակը, միավորի գինը և գումարը:
2.4. Մատակարարը Գնորդի համաձայնությամբ կարող է չիրացված ապրանքը փոխարինել Մատակարարի տեսականու մեջ մտնող այլ ապրանքով:
2.5. Գնորդի կողմից խոտան հայտնաբերելու դեպքում Մատակարարը պարտավորվում է վերանորոգել կամ փոխարինել այն: Ապրանքների տեսակավորումը և փաթեթավորումը պետք է համապատասխանեն գործող չափանիշներին:
2.6. Ապրանքների ընդունումը, «Գնորդի» կողմից կատարվում է տվյալ ապրանքագրի ստորագրմամբ:

3. Հաշվարկների կարգը

3.1. Գնորդի կողմից ապրանքի վճարումն իրականացվում է ապրանքի ստացումից հետո՝ _____ ընթացքում:
3.2. Ապրանքների գների փոփոխման դեպքում Մատակարարը կատարում է մատակարարվող ապրանքների բացթողնման գների վերահաշվարկ: Գնացուցակը Գնորդին է հաղորդվում նոր գներ սահմանելուց հետո՝ _____ ընթացքում:

4. Պայմանագրի գործողության ժամկետը և լուծարումը

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև «___»_____ թ.:
4.2. Պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծարման այն դեպքում, եթե կողմերից մեկը թույլ է տալիս դրա պայմանների կոպիտ և բազմակի խախտումներ: Պայմանագրի լուծարման նախաձեռնող կողմը պարտավոր է ոչ ուշ, քան լուծարումից _____ առաջ, գրավոր տեղեկացնել մյուս կողմին պայմանագրի լուծարման մասին:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Մատակարարված ապրանքի վճարման ուշացման դեպքում Գնորդը կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ ժամանակին չվճարված գումարի _____ տոկոսի չափով:
5.2. Արտադրանքի չմատակարարման կամ թերամատակարարման դեպքում Մատակարարը վճարում է տույժ՝ չմատակարարված կամ թերամատակարարված ապրանքի արժեքի_____ տոկոսի չափով, եթե նա այդ մասին սահմանված ժամկետում տեղյակ չի պահել «Գնորդին»: Տույժի վճարումը Մատակարարին չի ազատում պատվիրված ապրանքի մատակարարման պարտավորությունից:

6. Վեճերի քննության կարգը

Սույն պայմանագրից բխող կամ դրա հետ կապված բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով լուծելու անհնարինության դեպքում կողմերը դրանք հանձնում են դատարանի քննությանը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1. Լրացուցիչ համաձայնությունները, ինչպես նաև սույն պայմանագրի ցանկացած փոփոխությունը և լրացումները կատարվում են գրավոր և ստորագրվում կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից:
8.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրա-վաբա-նական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Մատակարարող	*Գնորդ*
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
ստորագրություն	ստորագրություն